22726

375
2-29

2010

Z-29



ՅԻՇՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԾՐԱԳԻՐ

ԵՒ

ԴԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ. — Ս. ՂԱԶԱՐ

1896

Հ-29
30
370
1967-ԾՐ
375:373
Հ-29
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
15144

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ամիրարեան

ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

10631-ԿԷ

6555-57

ԾՐԱԳԻՐ

ԵՒ

ԴԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

1

ՈՎԱՆԴԱԿ Մխիթարեան դպրոցք՝ մի մարմին կը կազմեն ընդ Մուրատ–Ռափայէլ վարժարանին, հետեւեալ դասակարգութեամբ. —

Նախակրթարանք (Elémentaires) են յԱրեւելս գտնուած մեր ամեն դպրոցներն. միայն Քաղկեդոնի վարժարանն է Կրթարան (Gymnase). Լսարան (Lycée) Մուրատ–Ռափայէլեան վարժարանն ի Վենետիկ, և Համալսարանական (Universitaire) վարժարանն՝ յԵւրոպա։

2

Մեր բոլոր Նախակրթարան կոչուած Դպրոցք՝ ունին մի և նոյն ծրագիր ուսմանց, առաջնորդող առ Կրթարանն Քաղկեդոնի։

3

Այն ամեն աշակերտք՝ որք պիտի մտնեն ի Բաղկեդոնեան Կրթարան, Մուրատ–Ռափայէլեան Լսարանն երթալու նպատակաւ՝ պէտք են ուղղակի գրել առ Նախագահ Ուսումնական ժողովոյս ի Վենետիկ, այսու հասցէիւ Տեսչութիւն Մխիթարեան Վարժարանաց – Վենետիկ – Իտալիա. Գաղղիարէնն՝ այսպէս. Direction des Ecoles Mékhitharistes.

VENISE — S^t. LAZARE — ITALIE.

4

Նախակրթարաններէն ի Կրթարան անցնելու համար՝ պէտք են աշակերտք աւարտած ըլլալ նախակրթարանական ծրագիրը, և պիտի քննուին ի Կ. Պոլիս հաստատուած Ցանձնաժողովէն։

5

Պիտի պահուին ձրիաբար Բաղկեդոնի Կրթարանին մէջ՝ ի հաշիւ Մուրատայ 25 և Ռափայէլի 5 աղքատ և որբ մանկունք, ուշիմք և բարի վարուք ընտիրք։

6

Այդ 30 աշակերտներէն տասն միայն պիտի ըլլան Կ. Պոլսեցիք, և մնացեալ քսանն ի դաւառաց։

7

Աշակերտաց ընտրութիւնը ըստ սահմանեալ կարգաց՝ համեմատական թուով պիտի ըլլան այլեայլ տեղերէ։

8

Աշակերտք երբեք պիտի չկարենան գրաւել իրարու իրաւունքը։

9

Ի հաշիւ Վենետկոյ Լսարանին պահուելիք 30 ձրիավարժ աշակերտներէն դուրս, Բաղկեդոնի Կրթարանին մէջ կ՚ընդունուին նաև ուրիշ թոշակաւորք։

10

Այն ամեն աշակերտք, որոնք երկու անգամ՝ ի Բաղկեդոնեան Կրթարանի քննութեան մէջ չեն յաջողիր, կը կորսնցնեն այնուհետև ձրիաբար հոն մնալու իրաւունքը։

11

Բաց ի Բաղկեդոնեան Կրթարանէն՝ ուրիշ ոչ մէկ տեղէ չեն կարող աշակերտք անցնիլ ուղղակի ի Լսարանն Վենետկոյ։

12

Վենետկոյ Լսարանն անցնելու համար՝ պէտք են աշակերտք կատարած ըլլալ երկու Ճարտասանական տարիներն, և քննուելով ի Կ. Պոլիս հաստատուած Ցանձնաժողովէն՝ ունենալ անոնց վկայագիրը։

13

Վենետկոյ Լսարանն անցնող աշակերտք, պէտք են առ նուազն ըլլալ հնգետասանամեայք։

14

Բաղկեդոնեան Կրթարանի Տեսչութիւնը պիտի յղէ ի Վենետիկ, տարուէ տարի, 15 յարմար աշակերտներ։

15

Վենետկոյ Լսարանին մէջ պիտի մնան աշակերտք երեք տարուոյ չափ՝ որոնք Հայոցարանական դպրոցի ծրագրի պահանջած ուսմունքները դեռ ուսած չեն։

16

Առաջին երկու տարիներուն մէջ պիտի ուսանին և աւարտեն իմաս-

տասիրական կոչուած դասընթացքը։ Իսկ երրորդին մէջ պիտի պարապին ի պատրաստութիւն համալսարանի և դեղարուեստի։

17

Անոնք՝ որք կը փափաքին ընել վաճառականութեան, հաշուեկալութեան, նաւային և երկրագործութեան ընթացք, եթէ արժանաւորք են՝ պիտի կարենան յաճախել Քաղաքիս վաճառականական և նաւային և երկրագործութեան բարձրագոյն վարժարանները։

18

Թիւ ձրիավարժ աշակերտաց վենետկոյ Լսարանին՝ պիտի ըլլայ չուրջանակի 45։

19

Կ՚ընդունուին լիաթոշակ աշակերտք ալ՝ յետ քննութեան ի Քաղկեդոն՝ ըստ ծրագրի Յայտարարութեան վենետկոյ Լսարանի։

20

Աշակերտք՝ յետ որոշեալ երեք տարիները կատարելու գովութեամբ և յաջողութեամբ վենետկոյ Լսարանին մէջ, – համաձայն ծրագրին որ ի վենետիկ, – արժանաւորքն ըստ ամենայն մասանց՝ պիտի անցնին ի Համալսարանական վարժարան։

21

Ռուսահպատակ ազգային վարժարանաց այն աշակերտներն՝ որոնք կը ցանկան մեր Համալսարանական վարժարանն անցնիլ, – առանց մեալու ի Կ. Պոլիս, – հարկ է որ սորա ծրագրի պահանջածին համաձայն ուսմունքներն ըրած, և Քաղկեդոնեան Կրթարանէն անցած ժամանակ՝ այն տեղի Յանձնաժողովին նախապէս քննուած և վկայական առած ըլլան։

22

Նոյնպէս Եւրոպկոյ քաղաքներէն և Եգիպտոսէ աշակերտք կ՚ընդունուին, եթէ ունենան վկայական պահանջեալ ուսմանց և բարի վարուց՝ տեղւոյն վարժարանէն։

23

Համալսարանական ձրիավարժ աշակերտաց ծախքը բովանդակապէս Սամուէլ Մուրատի կտակէն մատակարարուելով, հաստատութիւնն ևս լոկ Մուրատեան պիտի կոչուի։

24

Թիւ Համալսարանական աշակերտաց պիտի ըլլայ ոչ նուազ քան զտասն և հինգ։

25

Համալսարանական աշակերտք միաբան պիտի ապրին, հսկողութեան ներքև, և պիտի ունենան իրենց յատուկ կարգերն և կանոնները։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
10323-58

22726

2013